Ասէ Գասպար թագաւորն, յորժամ զկնդրուկն տարայ մատուցի առաջի նորա, տեսի զնա մարմնով որդի Աստուծոյ բազմեալ յաթոռ փառաց և զօրք անմարմինք սպասաւորէին նմա։ Ասէ Պաղտասար. և ի մտանելն իմոյ՝ տեսի զնա նստեալ ի բարձրութեան գահոյից և զօրք բազմութեան առաջի նորա՝ որք անկեալ երկիրպագանէին նմա։ Ասէ Մելքոն. ես մարմնով տեսի զնա ի չարչարանս մեռեալ, դարձեալ յարուցեալ իսկ եւ կենդանի։ Զայս իբրև լուան թագաւորքն ի միմեանց, հիացումն եղեալ զարմանային և ասեն. զի՞նչ են նոր սքանչելիքս որ ցուցաւ մեզ, որ նման միմեանց ոչ են վկայութիւնքս, հաւատալի գործ զոր աչօք մերովք իսկ տեսանեմք։

Եւ ի վաղիւն յարուցեալ թագաւորքն ասեն ցմիմեանս. եկայք միաբան երթիցուք ի յայրն, և տեսցուք թէ այլ ինչ նշան երևի մեզ։ Եւ գնացեալ Պաղտասար, այն որ առաջին զտեսիլն ոչ ետես, այլ որդի մարդոյ մարմնաւոր թագաւորի յայտնեցաւ նմա։ Եւ Գասպար ետես զմանուկն բազմեալ ի յանբանից մըսուր. և ետես զերկրորդ տեսիլն և պատմեաց նոցա, եթէ առաջին տեսիլն ոչ տեսի, այլ զքոյդ Պաղտասար, զոր ասացեր։ Յայնժամ եմուտ Մելգոն և ետես զՅիսուս բազմեալ ի վերայ գահոյիցն, եւ զառաջին տեսիլն ոչ ետես, որ մեռեալ էր, և դարձեալ կենդանի ետես զնա՝ այլ զոր Գասպարն ետես զնա մարմնով Աստուած ծնեալ ի կուսէն, և վաղվաղակի խընդութեամբ գնաց Մելգոն և պատմեաց եղբարցն։ Զայս տեսեալ թագաւորացն ամենեցուն եւ գնացեալ նոցա առանձինն միաբանեալ նստան, և սկսեալ միմեանց պատմեցին զտեսիլն զոր ծանեան և իմացան։ Ասեն ցմիմեանս. եղբարք, եկայք գնասցուք ի տեղի ի՞նչ-